ՀՈՒՇԱԳԻՐ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ

«ՎԵԼԼՆԵՍՍ» ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ՄԻՋԵՎ, ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՂՉԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» փետրվար 2023 թ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը (այսուհետ՝ Արհմիություն) (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Տիգրան Մեծի 17, էլ.հասցե՝ tradeunion@aspu.am, այսուհետ՝ կողմ 1) ի դեմս նախագահ Էդիկ Ավագիմի Գուլյանի մի կողմից և «ՎԵԼԼՆԵՍՍ» ատամնաբուժական կլինիկայի (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Մարշալ Բաղրամյան 33/ա, էլ.հասցե՝ wellnessdentalclinic2021@gmail.com, այսուհետ՝ կողմ 2), ի դեմս տնօրեն՝ Արմեն Արայիկի Ներսիսյանի մյուս կողմից (այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը պայմանավորվում են համագործակցել գործընկերության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սկզբունքներից ելնելով, մեկտեղել իրենց ջանքերը, միջոցներն ու փորձը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպության անդամների սոցիալական աջակցության նպատակով իրականացնել որակյալ և մատչելի ատամնաբուժական ծառայություններ հետևալ պայմաններով.

1.1. ատամնաբուժական ցանկացած խորհրդատվություն տրամադրվում է անվճար,

1.2. ատամնաբուժության, անձնական հիգենայի և ոլորտում առկա նորարարությունների իրազեկման նպատակով սեմինարների, զեկուցումների, կոնֆերանսների համատեղ կազմակերպում, հանդիպումներ կոլեկտիվի հետ,

1.3. «ՎԵԼԼՆԵՍՍ» ատամնաբուժական կլինիկայի բոլոր ծառայությունները իրականավցվում են 20-30% զեղչերով, կախված ծառայության տեսակից և բնույթից (ծառայությունների տեսակները և զեղչերը ներկայացված է հավելված 2-ում),

1.4. բուժառուները պարտավորվում են պատշաճ իրականացնել բժշկի տված ցուցումները և պատասխանատու կերպով հաճախել նշված ժամկետներում,

1.5. պայմանավորված զեղչերից օգտվելու համար արհեստակցական կազմակերպության անդամները ներկայացնում են արհմիության կողմից տրված զեղչի ուղեգիր,

1.6. որպես զեղչի ուղեգիր՝ կողմերը ճանաչում են հավելված 1-ում ներկայացված ուղեգրի տարբերակը,

1.7. յուրաքանչյուր զեղչի ուղեգիր կողմերի մոտ նույնականացվում է իր գրանցման համարով:

2. Սույն Հուշագիրը չի բացառում համագործակցության այլ ձևեր, որոնք կարող են առաջադրվել պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, ինչպես նաև կարող են լրացվել կամ փոփոխվել երկու կողմերի գրավոր պայմանավորվածությամբ:

3. Սույն Հուշագրի գործողության ժամկետը 5 տարի է: Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է ընդհատել պայմանագրի գործողությունը, այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին ոչ ուշ, քան սույն պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց 3 ամիս առաջ:

3.1. Հուշագիրն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ 5 տարիների համար, եթե պայմանավորվող կողմերից որևէ մեկը պայմանագրի գործողության ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 3 ամիս առաջ գրավոր չտեղեկացնի մյուս կողմին՝ պայմանագրի գործողությունը դադարեցնելու անհրաժեշտության մասին:

4. Հուշագրի դրութներից բխող աշխատանքների բնույթի, ծավալի և այլ անհրաժեշտ գործողությունների հստակեցումը Կողմերը կկատարեն Հուշագրի շրջանակում առանձին փաստաթղթեր կազմելու և հաստատելու միջոցով:

5. Կողմերը պայմանավորվում են սույն հուշագրում նշված նպատակներին հասնելու համար գործադրել իրենց լավագույն ջանքերը, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով անհրաժեշտության դեպքում տեղեկատվության, գիտելիքի, փորձի, հմտությունների փոխանակմամբ, մասնագիտական հանձնախմբերի ստեղծմամբ, այլ անձանց և մարմինների հետ համագործակցությամբ:

6. Կողմերը ֆինանսական պարտավորվածություն չեն կրում:

7. Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի հաստատման պահից:

8. Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

9. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

10. Հուշագիրը կնքված է երկու հավասարազոր հայերեն օրինակից. յուրաքանչյուր Կողմին՝ մեկ օրինակ:

11. Կողմերի իրավաբանական հասցեները

ԿՈՂՄ 1	ԿՈՂՄ 2
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպություն Հասցե՝ ք.Երևան, Տիգրան Մեծի 17, էլ.հասցե՝ tradeunion@aspu.am, Հեռ. 010 59 70 57 Նախագահ _____ Է. Գույլան (ստորագրություն)	«ՎԵԼԼՆԵՍՍ» ատամնաբուժական կլինիկայի Հասցե՝ ք.Երևան, Մարշալ Բաղրամյան 33/ա, էլ.հասցե՝ wellnessdentalclinic2021@gmail.com Հեռ. 033 8000 32 Տնօրեն՝ _____ Ա. Ներսիսյան (ստորագրություն)